

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒՒ ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը



Ձ Ե Կ ՈՒ Յ Ց

ԹԵՄԱ *Դարձվածային միավորները ժամանակակից հայերենում (Խ. Աբովյանի Վերք Հայաստանի վեպի օրինակով*

ՀԵՂԻՆԱԿ *Լիլիթ Սարգսյան*

Քննարկվել, հավանության է արժանացել

մեթոդաբանական _____ նիստում: Արձանագրություն թիվ _____ :

Մեթոդաբանական նախագահ

(ստորագրություն)

Մերի Դանիելյան

(ազգանուն, անուն)

Տնօրենի տեղակալ

(ստորագրություն)

Արաքսյա Առստամյան

(ազգանուն, անուն)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԴԱՐՁՎԱԾԵԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ	5
ԴԱՐՁՎԱԾԵԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	7
ՓՈԽԱՌՅԱԼ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ.....	9
ԴԱՐՁՎԱԾԵԻ ԳԼԽԱՎՈՐ ԲԱՌԸ (ԿԱՄ ԲԱՌԵՐԸ)	9
ԴԱՐՁՎԱԾՔ ԵՎ ԲԱՌ.....	10
ԴԱՐՁՎԱԾՔ ԵՎ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ	13
ԴԱՐՁՎԱԾԵԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	14
ԲԱՅԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	16
ԲԱՅ+ԳՈՅԱԿԱՆ, ԲԱՅ+ԴԵՐԱՆՈՒՆ	16
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ՝ ԸՍՏ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ	18
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՔԻ ՄԵՋ	19
ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԽՈՍՔ ԵՎ ԴԱՐՁՎԱԾՔ	20
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	22
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզուն՝ որպես հաղորդակցության դիմամիկ և անընդհատ զարգացող համակարգ, առատորեն հյուսված է լեզվական այնպիսի երևույթներով, որոնք տարբերությամբ իմաստ ու երանգ են հաղորդում մեր խոսքին: Այդ առումով առանձնանում են դարձվածքները՝ որպես լեզվական գրավիչ կառույցներ, որոնք հաճախ ամփոփում են տվյալ ժողովրդի մշակութային իմաստությունը, պատմական իրողությունները և փոխաբերական պատկերացումները: Սույն հետազոտությունը, դարձվածքների բարդ տիրույթում խորամուխ լինելով, ուշադրությունը հրավիրում է դրանց դրսևորմանը՝ Խ. Աբովյանի «Վերք Յայաստանի» նշանավոր երկում:

Արդիականություն: Դարձվածքները վաղուց հետաքրքրել են լեզվաբաններին, գրականագետներին, մշակութային մարդաբաններին, հասարակագետներին և այլոց: Նրանցից շատերի արձատները ձգվում են դեպի հին քաղաքակրթություններ, երբ դրանք հյուսվում էին բանավոր ավանդույթների և պատումների մեջ: Ժամանակի ընթացքում դարձվածքային արտահայտությունները դարձել են ամենօրյա խոսակցության անբաժանելի տարրեր:

Դարձվածքների ստուգաբանությունը, ձևը և գործառույթը հասկանալը առանցքային է լեզվի նրբերանգային շերտերը բացահայտելու համար: Այն լուսավորում է մշակութային հիմքերը, պատմական ազդեցությունները և ճանաչողական գործընթացները, որոնք ձևավորում են մեր խոսքը: Այս ուսումնասիրությունը ոչ միայն խթանում է լեզվական բազմազանության ավելի խոր ընկալմանը, այլև կոնկրետ ստեղծագործության օրինակով, ինչպիսին աշխարհաբար լեզվով շարադրված երկն է՝ «Վերք Յայաստանին», թույլ է տալիս ուսումնասիրել լեզվի, մշակույթի և գրական ստեղծագործության փոխազդեցությունը: Ուստի թեև դարձվածքների վերաբերյալ ուսումնասիրությունները քիչ չեն, այս աշխատանքը ուրույն տեսանկյունից է մոտենում հարցին՝ նեղացնելով դրա շրջանակը կոնկրետ լեզվական և գրական համատեքստում և բացահայտելով դարձվածքների մինչ այժմ չուսումնասիրված նրբերանգներ:

Նպատակ և խնդիրներ: Աշխատանքի նպատակն է Խ. Աբովյանի «Վերք Յայաստանի» երկի քննությամբ բացահայտել և մեկնաբանել հայերենի դարձվածքային համակարգը՝ ժամանակակից վիճակում և պատմական զարգացման մեջ:

Սույն նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. տալ դարձվածքային միավորների սահմանումը,
2. ուսումնասիրել հայերենում գործածվող դարձվածքների ծագումը,
3. վերլուծել դարձվածքների ձևաբանական, բառակազմական, շարահյուսական և ոճաբանական առանձնահատկությունները:

Օբյեկտ և առարկա: Սույն հետազոտության օբյեկտը ժամանակակից արևելահայերենի դարձվածաբանական համակարգն է, իսկ առարկան Խ. Աբովյանի «Վերք Ջայաստանի» երկում օգտագործված դարձվածքային միավորներն են:

Մեթոդ: Սույն հետազոտության մեջ օգտագործվել է բովանդակության վերլուծության մեթոդը՝ հայալեզու լեզվաբանական աշխատությունների հիման վրա դարձվածքների առանձնահատկությունները սահմանելու և դրանց համար Խ. Աբովյանի «Վերք Ջայաստանի» վեպից օրինակներ բերելու նպատակով:

ԴԱՐՁՎԱԾՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Բառային կազմի ուսումնասիրության մեջ իրենց ուրույն տեղն ունեն դարձվածքային արտահայտությունները կամ դարձվածքները: «Դրանք բառապաշարի կայուն բառակապակցություններ են, ձևի ու բովանդակության տեսակետից բառային յուրահատուկ կապակցություններ, որոնց ամբողջությունը լեզվի մեջ և մանավանդ բառապաշարի այդ մասն ուսումնասիրող լեզվաբանական գիտության բաժինը ընդունված է կոչել դարձվածաբանություն»^[1]:

Թեև դարձվածքները ,իբրև լեզվի պատրաստի միավորներ, դիտված են վաղուց, սակայն դարձվածաբանությունը ձևավորվել է 20-րդ դարում՝ ֆրանսիացի Շ. Բալլիի կողմից:

«Դարձվածաբանությունը հայ լեզվաբանության ամենաերիտասարդ բնագավառներից է: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ դարձվածաբանության բազմաթիվ հարցեր առայժմ լուծված չեն: Նույնիսկ վեճի առարկա է դարձվածաբանության տեղի հարցը լեզվաբանության բաժինների շարքում: Ամենատարածված կարծիքի համաձայն դարձվածաբանությունը բառագիտության մեջ է մտնում իբրև նրա ենթաբաժին: Այս դեպքում նկատի է առնվում այն հանգամանքը, որ դարձվածքը իր նշանակությամբ բառի արժեք ունի»^[2]:

Դարձվածաբանությունը սերտորեն առնչվում է նաև շարահյուսությանը՝ միաժամանակ շփման եզրեր ունենալով բառակապակցությունների հետ, որոնք դարձվածքների առաջացման գործում սկզբնաղբյուրի արժեք ունեն:

Դարձվածաբանությունը սերտ կապ ունի նաև ոճաբանության հետ, քանի որ դարձվածքները պատկանում են լեզվի պատկերավորման միջոցների թվին: Այսպիսով, նշանակությամբ, ծագմամբ և խոսքի մեջ ունեցած յուրահատուկ դերով պայմանավորված՝ դարձվածքները գտնվում են բառագիտության, շարահյուսության և ոճաբանության հատման կետում:

Դարձվածաբանությունը լեզվի տարբեր բաժինների հետ սերտ առնչություն ունեցող բնագավառ է: Սակայն այս դրույթը վիճելի է, քանի որ դարձվածքի բաղադրիչները բառային մակարդակի միավորներ են, և դարձվածքները մեծ մասամբ ծառայում են հակասություն արտահայտելուն՝ դրանով իսկ մոտենալով առանձին բառերին:

Դարձվածքները կազմում են բառապաշարի կարևոր և յուրահատուկ մասը և հիմնված են նրա ամենակենսունակ ու ամենադիմացկուն մասի՝ բառային հիմնական ֆոնդի վրա:

Հայագիտության մեջ գործածվում են և՛ *դարձվածք*, և՛ *դարձված* տերմինները: Նախընտրելի է *դարձվածք* տերմինը գործածել դարձվածաբանական միավորի նշանակությամբ, իսկ *դարձվածը*՝ դերբայական դարձվածի համար:

«Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցությունն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնած»^[3]:

Դարձվածքը ամենից առաջ բառակապակցություն է: Նրա բաղադրիչներն առանձին բառերի արժեք ունեն: Այլապես ոչ միայն դարձվածք, այլև ընդհանրապես բառակապակցություն չենք ունենա:

Ուսումնասիրության ընթացքում դարձվածքների բերված օրինակները խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից են:

Վերցնենք *անձնատուր լինել (իրեն պարտված ճանաչել, հանձնվել)* հարադրական բայը, որը կազմված է երկու բաղադրիչներից, ունի նույնիսկ փոխաբերական իմաստ՝ «տրվել, ենթարկվել», բայց ո՛չ դարձվածք է, ո՛չ էլ բառակապակցություն, քանի որ նրա բաղադրիչներից մեկը՝ *անձնատուր-ը*, առանձին բառի արժեք չունի: Այն նույնպիսի կազմություն է, ինչպիսիք են՝ *շուռ տալ, ման գալ, ման ածել* և այլն:

Սրանց հակառակ, դարձվածքներ են՝ *հոգին տալ (հոգին ավանդել, շունչը փչել, մեռնել)* (Էջ 160), *գլուխը քարեքար տալ (որևէ բանի կապակցությամբ, որևէ գործ հաջողացնելու համար չարչարվել, այս ու այն կողմ ընկնել)* (Էջ 19), *թրին պարզև անել (սրահողխող անել)* (Էջ 158), *գլուխը ուտել (1. սպանել, մեռցնել, ոչնչացնել, 2. մահվան պատճառ դառնալ, 3. հանդիմանական արտահայտություն)* (Էջ 159), *թրին մատաղ անել (սրահողխող անել)* (Էջ 160), *գլխըներին կրակ վառվել (1. խիստ վշտանալ, սիրտը մղկտալ, 2. մեծ դժբախտության՝ փորձանքի հանդիպել)* (Էջ 174) և այլ կապակցությունները: Դրանցից յուրաքանչյուրի բոլոր բաղադրիչներն էլ առանձին բառերի արժեք ունեն:

Դարձվածքի բաղադրիչների քանակական կապվածության հատկանիշը հասկանալի գիծ է, քանի որ բառերը առանց քերականորեն կապակցվելու չեն կարող ո՛չ ազատ, ո՛չ էլ կայուն կապակցություններ կազմել: Դարձվածքը ամենից առաջ կապակցություն է: Դարձվածքի հաջորդ հատկանիշը կայունությունն է: Այն հետևանք է տվյալ կապակցության՝ համապատասխան իմաստով գործնականության ընդհանրացման ու տարածման: Այդ կայունությունը մի շարք գործոնների հանրագումար է, այլ կերպ ասած՝ դարձվածքի կայունությունը դրսևորվում է մի շարք առումներով՝ 1. հնչերանգային, 2. բառային (լեքսիկական), 3. իմաստային, 4. ձևաբանական, 5. շարահյուսական, 6. կառուցվածքային, 7. գործառական:

Դարձվածքները արտահայտում են առանձին բառագաղափարներ, խոսքի մեջ սովորաբար հանդես են գալիս նախադասության որևէ անդամի դերում և համարժեք են այս կամ այն բառին:

«Խալիսի մեղքը չի, որ ճամփից դուս են եկել» (Էջ 77) նախադասության մեջ *ճամփից դուս գալ* դարձվածքը փոխարինում է *շեղվել* ստորոգյալին: Նման օրինակներ են նաև *հոգին*

առնել (1. սպանել, մեռցնել, 2. չարչարել, տանջել) (Էջ 135), իրանից գնալ (ուշաթափվել, նվաղել, մարել) (Էջ 53), խելքը գնալ (հափշտակվել, դյուրվել, զմայլվել, հմայվել) (Էջ 24), ոտի տակ տալ (կոխկրտել, անարգել) (Էջ 200), հոգին բերանը հասցնել (նեղել, չարչարել, տանջել) (Էջ 227), գլուխը պրծացնել (խուսափել, փրկվել) (Էջ 23), հոգի առնել (1. ոգևորվել, 2. շնչավորվել, կենդանանալ) (Էջ 135), սիրտ անել (համարձակվել, խիզախել) (Էջ 205), ոտքերն ընկնել (խնդրել) (Էջ 200), անկաջ անել (լսել) (Էջ 205, աչքըների փառը վեր ընկնել (պառապել, ծերանալ) (Էջ 206), բուրդը քամուս տալ (խոշտանգել) (Էջ 38) և այլ կապակցությունները: Իրենց կազմությամբ կամ կառուցվածքով դարձվածքները սովորաբար համապատասխանում են կամ սովորական բառակապակցություններին, կամ էլ ամբողջական նախադասություններին: Այդ բառակապակցությունները կամ նախկին ամբողջական նախադասությունները, որոնք հաճախակի ու երկար գործածվելու հետևանքով դարձել են դարձվածքներ, սովորական բառակապակցություններից կամ նախադասություններից տարբերվում են ոչ միայն իմաստային, այլև քերականական ուրույն դրսևորումով:

Սրանք, նախադասության մեջ հանդես գալով նախադասության այս կամ այն անդամի դերում և փոխարինելով դրանց արտահայտած ամբողջական կամ ընդհանուր իմաստին, որպես նրանց բառական համարժեքներ, քերականական կառուցվածքով էլ փոխարինում են նրանց:

«Այսպիսով՝ դարձվածքները կայուն բառակապակցություններ են, որոնք արտահայտվում են ամբողջական բառագաղափարներ և ունեն քերականական երբեմնի կապ ու կառուցվածք: Այդ կապը նախադասության մեջ արտահայտվում է իրեն փոխարինող բառային համապատասխան միավորի ձևաբանական համարժեքով»^[4]:

ԴԱՐՁՎԱԾՔԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դարձվածքի ստուգաբանությունը նրա առաջացման բացատրությունն է: Ի՞նչ կապ կա նրա բաղադրիչների ու ամբողջական իմաստի միջև, ի՞նչի հիման վրա է կազմվել այս կամ այն դարձվածքը, ո՞ր հեղինակից կամ լեզվի ոճական ո՞ր շերտից, լեզվի կիրառության ո՞ր ոլորտից, կամ էլ ո՞ր լեզվից է գալիս նա, ահա այն հարցերը, որոնց պետք է պատասխանել դարձվածքը ստուգաբանելիս:

Մեր լեզվի դարձվածքների գերակշռող մասի արտահայտած իմաստներն այնքան ակնառու կերպով են կապվում իրենց բաղադրիչների հետ, որ մտավոր մեծ ճիգ չի պահանջվում այդ աղերսը բացատրելու համար: Բայց կան և այնպիսիք, որոնց ստուգաբանական վերծանումը կապված է որոշակի դժվարությունների հետ:

Աբովյանի արձակում դրանք մեծ մասամբ կապված են փոխառությունների հետ: Օրինակ՝ *ջանը դող ընկնել (սաստիկ վախենալ, սարսափից սկսել դողալ)* (Էջ 19), *ջանին ընկնել (եռանդով սկսել մի բան անել, մի բանով զբաղվել)* (Էջ 33), *խաթր առնել (մեկին պատճառած վնասի դիմաց փոխհատույց լինել կամ հասցրած վիրավորանքի համար ներողություն խնդրել, զղջական վերաբերմունք ցույց տալ)* (Էջ 98), մուրազը փորումը թողնել (չթողնել՝ խոչընդոտել կամ չօգնել մեկի երազանքը, փափագը կատարվելուն) (Էջ 24), *ճարը կտրվել (1.միջոցները սպառվել, ստիպված լինել, Էլ հնար չունենալ, հույսը կտրել: 2. ուժասպառ լինել, հոգնել)* (Էջ 8): Հիշյալ օրինակներից *ջան*-ը պարսկերենից փոխառված բառ է, որը նշանակում է *հոգի, մարմին, խաթր*-ը արաբական փոխառություն է, որը նշանակում է *համար, հանուն, մուրազ*-ը արաբական փոխառություն է, որը նշանակում է *իղծ, նպատակ, տենչ, ցանկություն, ճար*-ը պարսկական փոխառություն է, որը նշանակում է *հնար, միջոց*:

Խաթր առնել (մեկին պատճառած վնասի դիմաց փոխհատույց լինել կամ հասցրած վիրավորանքի համար ներողություն խնդրել, զղջական վերաբերմունք ցույց տալ) (Էջ 98):

Մուրազը փորումը թողնել (չթողնել՝ խոչընդոտել կամ չօգնել մեկի երազանքը, փափագը կատարվելուն) (Էջ 24):

Ճարը կտրվել (1.միջոցները սպառվել, ստիպված լինել, Էլ հնար չունենալ, հույսը կտրել: 2. ուժասպառ լինել, հոգնել) (Էջ 8):

Ճար-ը պարսկական փոխառություն է, որը նշանակում է *հնար, միջոց*:

ՓՈԽԱՌՅԱԼ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

Շփվող լեզուներից փոխառությունները տևական հարստացման աղբյուրներից են: «Փոխառությունների մուտքը Աբովյանը տրամաբանում է այն կերպ, որ ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունները, ժողովրդի կապը իր հարևան ազգերի հետ, նրանց ընդհանուր հարաբերությունները հնարավոր է օգնեն կամ խանգարեն լեզվի զարգացմանը: Այդ փոխառություններով գրողը ստեղծել է ժողովրդական լեզվին հատուկ երևույթներ, չափազանցություններ, համեմատություններ, բազմաթիվ դարձվածքներ»^[9]:

Օրինակ՝ «Հարամ ըլի Էն հացն Էլ, Էն ջուրն Էլ, խաթա-բալի մեջ ընկանք, Էլի» (Էջ 421): *Խաթա-բալա*-ն նշանակում է *փորձանք*, *պատուհաս*: Խաթա-բալա-ն արաբական փոխառություն է:

Փոխառյալ բայական հարադրությունների հարադիր բայական արմատները: Օրինակ՝ *ճար անել* և *չարա անել* վերլուծական բարդությունները արտահայտում են «միջոց գտնել», «ելք փնտրել» և նման իմաստներ. «Ձին Էլ բերին, գլխավերևը կապեցին, որ բալքի նրա շունչն Էլ ա՝ Աղասուն մեկ ճար անի» (Էջ 199):

«Ճարս կտրվեց, գնացի նեմեցի Կոլոնիեն, մեկ նեմեց բարեկամի մոտ»: *Ճարը կտրվել*-- ը նշանակում է *ստիպված լինել*: «Դժոխքումս Էրվում տապակվում ենք, ախր ի՞նչ կըլի, որ մեզ մի չարա անեք» (Էջ 200):

«Շատ անգամ ճարը կտրում Էր, դուս Էր գալիս հայաթը, մեկ գերեզմանաքարի վրա նստում, մեկ կուշտ քնում, Էլ ետ ներս մտնում» (Էջ 16):

Աբովյանի երկերում տեղ գտած այս պարսկական փոխառությունները ունեն որոշակի հատկանիշներ. դրանք հիմնականում անմիջական անցած փոխառություններ են: Պարսկական ժողովրդական բնույթի փոխառությունները անցել են այս երկու ժողովուրդների անմիջական առնչությունների պայմաններում:

ԴԱՐՁՎԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԲԱՌԸ (ԿԱՄ ԲԱՌԵՐԸ)

Այստեղ հարցը քննվում է բառագիտական տեսանկյունից, այսինքն՝ դարձվածքի կազմում որ բառը կամ բառերն են, որ ամբողջի իմաստի հիմնական կրողն են:

Բավական մեծ է այն դարձվածքների թիվը, որոնց մեջ դժվար է որևէ մեկ բաղադրիչ առանձնացնել և գլխավոր համարել: Օրինակ՝ *ոտքերն ընկել (խնդրել, աղաչել, օգնություն խնդրել)* (Էջ 200), *ծեռքերը թուլանալ (վիատվել, լքվել, հուսահատվել, մի բան անելու ցանկությունը, կարողությունը կորցնել)* (Էջ 5), *սիրտ անել (համարձակվել, խիզախել)* (Էջ 205), *արինը ջուր դառնալ (1. սարսափահար լինել, երկյուղից ու սարսափից կարկամել, 2. մարդասպանությունը, արյունահեղությունը սովորական բան դառնալ՝ տարածվել)* (Էջ 72), *գլուխ ջարդել (1. հանդիմանական արտահայտություն՝ ծեծել)* (Էջ 90) և այլն:

Այդ կարգի դարձվածքները հաճախ կազմվում են լինել, դառնալ, մնալ և նման բայերի օգնությամբ:

Օրինակ՝ արիւնը սրտումը թան դառնալ (վախից ու սարսափից կարկամել, լեղաճաք լինել) (Էջ 136), արիւնը ջուր դառնալ (1. սարսափահար լինել, երկյուղից ու սարսափից կարկամել, 2. մարդասպանությունը՝ արյունահեղությունը, սովորական բան դառնալ՝ տարածվել) (Էջ 72), թրին պարզև անել (սրախողխող անել, սպանել) (Էջ 158) և այլն:

Բավական խայտաբղետ է հայերեն դարձվածքների գլխավոր բառերի իմաստային դաշտերի վիճակագրությունը: Ամենից շատ դարձվածքները կազմված են մարդկային մարմնի մասերի անուններով, և դա միանգամայն հասկանալի է. մարդ արարածը, անհատն իրենով, իր օրգանիզմով, իր զգայարններով ու զգայություններով է կապվում աշխարհի հետ, և վերջինս դրանց միջով բեկվելով է հասնում նրա իմացությանն ու գիտակցությանը:

Աչք և սիրտ բառերից ունենք ավելի քան հարյուրական դարձվածք: Պատկառելի թիվ կազմող դարձվածքներ ունենք նաև *ոտք*, *ձեռք*, *գլուխ* բառերով: Սրանցից հեռու չեն *խելք*-ը, *միտք*-ը, *արյուն*-ը, *լեզու*-ն: Օրինակ՝ գլխովն անց կենալ (1. մի բանի մասին մտածել՝ խորհել, հանկարծակի միտք ծագել, 2. որևէ բանի մասին կասկածել, 3. մեկի կյանքում տեղի ունենալ՝ պատահել) (Էջ 158), գլուխը ուտել (1. սպանել, մեռցնել, ոչնչացնել, 2. մահվան պատճառ դառնալ) (Էջ 159), սիրտ դնել (նվիրվել) (Էջ 176), սիրտը շահել (իր կողմը գրավել, սիրաշահել, հօգուտ իրեն տրամադրել, տրամադրությունը լավացնել, վերականգնել) (Էջ 47), սիրտը բարակել (ոյուրազգաց, նուրբ դառնալ) (Էջ 193), ոտքերն ընկնել (խնդրել, աղաչել, օգնություն խնդրել) (Էջ 200), ձեռիցը պրծնել (ազատվել, օձիքը մեկի ձեռքից ազատել) (Էջ 41), աչքը սևանալ (կուրանալ, ահավոր բան տեսնել) (Էջ 212) և այլն: Դարձվածքի հիմնական բաղադրիչ են դառնում նաև բնության առարկաներ (*աշխարհ*, *գետին*, *ծով*, *քար*, *ջուր*, *հող*, *կրակ*, *արև*, *երկինք*, *օդ*, *լույս*, *քամի* և այլն), կենդանիներ (*առյուծ*, *ագռավ*, *հավ*, *ծիտ*, *մուկ*, *շուն*, *օձ*, *կատու*, *ուղտ* և այլն), կենցաղային առարկաներ (*աղ*, *բաժակ*, *դուռ*, *հաց*, *սեղան*, *տուև* և այլն), շատ գործածական վերացական հասկացություններ (*հատված*, *բան*, *գործ*, *կյանք*, *խելք*, *խիղճ*, *խոսք*, *շունչ*, *հոգի*, *միտք*, *սատանա* և այլն) արտահայտող բառեր:

ԴԱՐՁՎԱԾՔ ԵՎ ԲԱՌ

Դարձվածքը և բառն ունեն ընդհանուր հատկանիշներ, այն է՝ բառային իմաստ և քերականական կարգեր: Բառը և դարձվածքը նման են նրանով, որ երկուսն էլ արտահայտում են հասկացություն: Նույն հասկացությունը մի դեպքում կարող է

արտահայտվել բառով, մյուս դեպքում՝ դարձվածքով: Այսպես՝ նույն հատկության դրսևորումներին են ծառայում *ճամփից դուս գալ (շեղվել)* (Էջ 77), *ձեռքերը թուլանալ (վհատվել, լքվել, հուսահատվել)* (Էջ 5) և այլն: Իսկ ի՞նչ տարբերություն կա բառի և դարձվածքի միջև հասկացության արտահայտման տեսակետից:

Դարձվածքը հուզարտահայտչական տեսակետից գունավորում, պատկերավորում է տվյալ հասկացությունը: Գոյություն ունեն դարձվածքների և բառերի հոմանշության բազմաթիվ շարքեր (*սիրտ անել-համարձակվել* (Էջ 205), *ձեռիցը պրծնել- ազատվել* (Էջ 41), *խոսքից դուրս գալ- մերժել*) (Էջ 22): Դարձվածքի և բառի իմաստային ընդհանրությամբ պետք է բացատրել այն երևույթը, որ երբեմն որոշ դարձվածքներից բառեր են կազմվում:

Այսպես՝ *տուն քանդել* դարձվածքից կազմվել է *տնաքանդ բառը, աչքերը կապել-ից՝ աչքակապություն-ը, մեկի հետ աղ ու հաց ուտել-ից՝ աղուհացկեր-ը (մարդ)* և այլն:

Խառը և հոմանիշ դարձվածքները ընդհանրություն ունեն նաև գործառության քերականական տեսակետից, այսինքն երկուսն էլ կարող են ունենալ քերականական համապատասխան ձև և նախադասության մեջ կատարել այս կամ այն պաշտոնը: Երբ ասում ենք «Շատ էլիսդրեցին ընկերքը, որ չանի, ականջ չարեց» և «Շատ էլ խնդրեցին ընկերքը, որ չանի, չսեց», ապա դրանցում *ականջ անել* դարձվածքը և *լսել* բառը նույն դերն ունեն: Բառի և դարձվածքի քերականական հատկանիշները ընդհանրություն ունենալով միաժամանակ և տարբեր են: Դարձվածքը երբեմն հոմանիշ բառից տարբերվող հատկություններ կարող է ունենալ: Արձանագրելով դարձվածքի և բառի իմաստային գործառական-քերականական ընդհանրությունները՝ չենք նույնացնում այդ երկուսը: Բառը և դարձվածքն ունեն Էական տարբերություններ: Դարձվածքը բնորոշ է նրանով, որ տարանջատ դասավորվածություն ունի, մինչդեռ բառը միասնական է իր ձևով: Բառին հատուկ է մեկ շեշտ, մինչդեռ դարձվածքի կազմում կան մեկից ավելի շեշտակիր միավորներ: Դարձվածքային առանձնահատուկ արտահայտությունները, զրկված լինելով իրենց ուղղակի առումից, փոխաբերական կամ անուղղակի իմաստի արմատավորման հետ միասին աստիճանաբար ձեռք են բերել բառային արժեք և թեն հաճախ էլ կարող են փոխարինվել հոմանիշ կամ համարժեք բառերով, բայց միաժամանակ ունեն յուրահատուկ ոճային կիրառումներ կամ իմաստային նրբերանգներ: Դրանք, արտահայտվելով առանձին բառազաղափարներ, դեռևս չմիաձուլված հարադրյալ բառեր են և մտնում են ընդհանուր բառապաշարի մեջ՝ որպես այն հարստացնող ուրույն տեսակի բառեր:

Հարադրական բարդությունները դարձվածքներից տարբերելու համար պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները:

1. Հարադրական բարդության բաղադրիչները սոսկ ձևականորեն են պահպանում բառային տեսքը, մինչդեռ դարձվածքի բաղադրիչները մեծ մասամբ ինքնուրույն բառաձևեր են: Օրինակ՝ *դադըթմիշ անել (ցրել)* (Էջ 64), *թամաշ անել (նայել)* (Էջ 90), *թավազա անել*

(*հյուրասիրությունն անել*) (Էջ 13), *քյար անել* (*օգուտ անել*) (Էջ 16), *խաթր անել* (Էջ 19), *երըմիշ լինել* (Էջ 72), *բաթմիշ լինել* (*սուզվել, անհետանալ*), *իշարաթ անել* (*նշան տալ*) (Էջ 38), *դոնմիշ լինել* (*երեսը շուռ տալ*) (Էջ 156), *ռաստ գալ* (*հանդիպել*) հարադրությունների բաղադրիչներն առանձին վերցրած անկախ գործածությունն էլ չունեն և նրանց բառային տեսքը միայն պայմանական է: Իբրև բարդ բառ՝ ամբողջ հարադրությունը մեկ շեշտ ունի:

2. Հարադրական բարդության բառային միասնական իմաստը բխում է բաղադրիչների իմաստից, պայմանավորված է նրանցով: Մինչդեռ դարձվածքի իմաստը մեծ մասամբ այդպիսին չէ:

Այսպիսով, թեև որոշակի ընդհանրություն կա բառի և դարձվածքի միջև, սակայն սրանք նույնական չեն, և պետք է հստակորեն տարբերվեն բառն իր տարատեսակներով և դարձվածքը:

Դարձվածքի բաղադրիչը սոսկ հնչյունական՝ արտաքին տեսքով է բառի նման, քանի որ բառային շեշտ ունի, իսկ իրականում այն կորցրել է բառային ինքնուրույնությունը: Բանն այն է, որ դարձվածքի կազմում հանդես գալով՝ այն չունի ո՛չ բառային իմաստ, ո՛չ ձևաբանական և ո՛չ շարահյուսական ինքնուրույնություն:

Նույնիսկ այն դեպքում, երբ այս կամ այն բառը դարձվածքի կազմի մեջ է մտնում այնպիսի նշանակությամբ, որ ունի ազատ կապակցությունների մեջ էլ, միևնույն է, կապակցության ամբողջության մեջ բառը դարձվածային իմաստի այս կամ այն երանգն է արտահայտում:

Բաղադրիչն ըստ էության ձևույթի դեր է կատարում: Շատ դեպքերում բառի դարձվածային իմաստը համընկնում է նրա փոխաբերական առմանը: Օրինակ՝

Արյուն բառով կազմված շատ դարձվածքների մեջ դրսևորվում են հետևյալ իմաստները.

- «արյունահեղություն». «Մյուս կողմից իրանք էին թշնամու արիւնը ծծելով (մեկին ռիսերիմ թշնամի լինել, սաստիկ ատել, պատրաստ լինել նրան սպանելու՝ նրա արյունը թափելու, մեկին սպանել) ման գալիս» (Էջ 156)
- «հուզում». «Արիւնը սրտումը թան դառաւ (վախից ու սարսափից կարկամել, լեղաճաք լինել)» (Էջ 136), «Արիւնն աչքերն առած՝ (մի բան անելու համար կյանքը մահվան վտանգի ենթարկել, մահը աչքն առնել, իր կյանքը վտանգի տակ դնել) ընկնում են Էս մեկ բուռը զորքը Էն անթիվ բազմությունի ետևիցը» (Էջ 160):

Երկու եական տարբերություններ կան բառի փոխաբերական առումների և դարձվածային իմաստների միջև:

Առաջին՝ եթե փոխաբերական նշանակությունը կարող է դրսևորել թե՛ ազատ, թե՛ կայուն կապակցությունների մեջ, ապա դարձվածայինը՝ միայն կայուն կապակցությունների մեջ:

Երկրորդ՝ եթե փոխաբերական նշանակությունը դուրս չի գալիս տվյալ իմաստային դաշտի սահմաններից կամ զուգորդության շրջանակներից, ապա դարձվածայինը կարող է դուրս գալ այդ շրջանակներից, օրինակ՝ *գլխին թափել* (1. *ծանրաբեռնել*, 2. *հավաքել*, *ժողովել*, *կուտակել*, 3. *վերագրել*) (Էջ 157), *գլխըներին կրակ վառվել* (1. *խիստ վշտանալ*, *սիրտը մոկտալ* 2. *մեծ դժբախտության՝ փորձանքի հանդիպել*) (Էջ 174), *գլխիցը ձեռք վեր առնել* (*հանդուգն գործ ձեռնարկել*, *կյանքը վտանգի ենթարկել*, *կյանքը չափսոսալ*) (Էջ 205), *գլուխը քարեքար տալ* (1. *դես ու դեն ընկնել*, *շատ չարչարվել*, 2. *անելիքը չիմանալ*, *անելանելի վիճակի մեջ լինել* 3. *հանդիմանական արտահայտություն՝ սխալ բան անել*, *սխալ գործել*, *հիմարություն անել*) (Էջ 19):

Եվ եթե գլուխ բառը «գրքի գլուխ» նշանակությամբ արդեն դուրս է եկել «մայր» բառի իմաստային դաշտից ու դարձել համանուն, ապա այդ նույն բառը՝ իբրև դարձվածքների բաղադրիչ, ինչքան էլ հեռանա «մայր» իմաստից, միևնույն է, մնում է նույն բառը՝ թեկուզ հեռավոր, բայց ինչ-որ թելերով կապված նրա հետ:

ԴԱՐՁՎԱԾՔ ԵՎ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Դարձվածքները թեև ձևով նման են բառակապակցություններին, սակայն միայն ծագմամբ են կապվում նրանց հետ: Ուստի դարձվածքների կապը բառակապակցությունների հետ հենվում է ոչ թե լեզվի արդի վիճակի, այլ պատմական ընթացքի, նրանց ծագման վրա»^[6]:

Դարձվածքների մի մասը ձևավորվում է պատմականորեն՝ ազատ բառակապակցությունների վերաիմաստավորմամբ:

«Ժամանակի ընթացքում, երբ կոնկրետ բառակապակցությունների բաղադրիչների հարաբերությունը մթագնում է, և պահպանվում է վերացական իմաստը, ազատ բառակապակցությունը վերածվում է դարձվածքի»: Օրինակ՝ «Արցունքի ջինջ կաթիլներն ընկան նրա աչքերից» (Էջ 39) և «... Էս վախտը բերանն ընկավ ու սրբություն, խաչ, ավետարան, աչքիցն ընկավ»: Երկրորդ դեպքում «աչքիցն ընկնել»-ը դարձվածք է, որը նշանակում է 1. *նախկին հարգանքը չունենալ*, *այլևս չսիրվել*, *չհարգվել*, 2. *անուշադրության մատնվել*, *մոռացվել* 3. *տեսադաշտից անհետանալ*, *այլևս չերևալ*: Բերենք այլ օրինակներ ևս

- «Գլխիցը ձեռք վերցնել» ազատ բառակապակցությունը և «Գլխիցը ձեռք վերցնել» (էջ 129) դարձվածքը: «Ուսուցիչը ձեռքը վերցրեց աշակերտի գլխից» և «Գլխիցս ձեռք վերցրու, դու դեռ ջահել ես»:
- «Տունը քանդել» (էջ 55): «Նրանք տունը քանդեցին՝ նորը կառուցելու նպատակով» և «...ա՛յ նրա տունը չքանդվի, ինչ քանդվեց»: *Տունը քանդել-ը* նշանակում է *մեծ վնաս հասցնել, ընտանիքը քայքայել*:

Դարձվածքը բառակապակցություն չէ նախ իր կառուցվածքով, քանի որ բառակապակցության բաղադրիչներն ունեն բառական ինքնուրույնություն, քերականական ձև, մինչդեռ դարձվածքի բաղադրիչները զուրկ են բառական ինքնուրույնությունից և հավասարվում են ձևույթներին՝ բառի կազմում, այսինքն՝ դրանք կատարում են այն դերը, ինչ որ ձևույթը՝ բառի մեջ:

Դարձվածքի և բառակապակցության փոխհարաբերությունը հասկանալու համար պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները.

1. Դարձվածքը կարող է առաջանալ ոչ միայն բառակապակցությունից պատմական երկարատև պրոցեսում, այլև կարող է կազմվել միանգամից՝ որևէ բառակապակցության օրինակով:

2. Դարձվածքն ունի բառային մեկ իմաստ և համարվում է բառակազմական մեկ միավոր, մինչդեռ բառակապակցությունն օժտված չէ մեկ բառային իմաստով: Բառակապակցությունը միասնական բառիմաստից զուրկ է:

3. Բառակապակցությունը կազմվում է երկու և ավելի լիիմաստ բառերից, մինչդեռ դարձվածքները կարող են կազմված լինել ոչ միայն երկու լիիմաստ բառերից, այլև մեկ լիիմաստ և մեկ սպասարկու բառից. օրինակ՝ *ջրի պես (սահուն, անսայթաք, բերանացի, անզիր)* (էջ 32), տակ *ու գլուխ անել* (էջ 9), *ոտի տակ տալ (կոխկրտել, անարգել)* (էջ 200):

ԴԱՐՉՎԱԾՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Դարձվածքի բաղադրիչների ձևաբանական ձևավորումը

Դարձվածային կապակցության առաջին պայմանը նրա ձևաբանական համապատասխան ձևավորումն է: Դարձվածքների մեջ բաղադրիչ բառերի կապակցումը տեղի է ունենում ձևաբանական նույն օրենքներով, ինչ-որ ազատ կապակցություններում:

«Սովորաբար դարձվածքի բաղադրիչները հավասար դեր չեն կատարում, դրանց մի մասը դարձվածքի հիմնական իմաստը կրողն է, իսկ մյուսները միջոց են դառնում դրա արտահայտման համար: Առաջիններն էլ անվանում են հիմնական բաղադրիչ»^[7]:

Երբ դարձվածքի բաղադրիչ են դառնում ածականը, թվականը, մակբայը, կապը, ապա սրանք թեքում չունեն, ուստի և դարձվածքի կազմի մեջ մտնում են հիմնականում կայուն ձևերով:

Իսկ երբ ածականը, թվականը օգտագործվում են փոխանվանաբար, ենթարկվում են գոյականի հատուկ օրինաչափություններին:

Այն գոյականը, որ դարձվածքի մեջ ստորադաս դիրք ունի, իր ձևավորումով ուղղակի կախում ունի գերադաս անդամից, իսկ եթե վերջինս բայ է կամ կապ, ապա՝ սրանց իմաստից ու հոլովառությունից:

Վերցնենք *գլուխ* բառի փոխակերպությունները զանազան դարձվածքների կազմում. *գլխում մտնել* (ներգ. հոլ., 1. *մի բան լավ հասկանալ՝ ըմբռնել*, 2. *հավատալ, համոզվել*) (Էջ 19), *գլուխը քարեքար տալ* (հայց. հոլ., 1. *դես ու դեն ընկնել*, շատ չարչարվել 2. *անելիքը չիմանալ, անելանելի վիճակի մեջ լինել*, 3. *հանդիմանական արտահայտություն՝ սխալ բան անել, սխալ գործել, հիմարություն անել*) (Էջ 156), *գլխըներին կրակ վառվել* (տր. հոլ., 1. *խիստ վշտանալ, սիրտը մղկտալ*, 2. *մեծ դժբախտության՝ փորձանքի հանդիպել*) (Էջ 174), *խելքը գլխիցը գնալ* (բաց.հոլ., 1. *խելքից, բանականությունից զրկվել, խելագարվել, ցնորվել, հիմարանալ, անխելքանալ*, 2. *անչափ ուրախանալ, գիտակցությունը, բանականությունը կորցնելու չափ ուրախանալ, ուրախությունից խենթանալ, զմայլվել, սքանչանալ*) (Էջ 194):

Դարձվածքի բաղադրիչ գոյական –լրացման ձևաբանական ձևավորումը կայուն է:

Դարձվածքի նշանակության արտահայտման տեսակետից նույնական են *հոգի տալ* և *հոգին տալ* (*հոգին ավանդել, շունչը փչել, մեռնել*) (Էջ 160), *հոգի մաշել* և *հոգին մաշել* (Էջ 93) դարձվածքները:

Երբ խոսվում է դարձվածքի գոյական լրացում բաղադրիչի ձևավորման մասին, հոլովից հետո հարկ է քննության առնել և թվի հարցը:

Կան դարձվածքներ, որոնց գոյական բաղադրիչի՝ եզակի կամ հոգնակի թվով դրված լինելը չի ազդում կապակցությունների ընդհանուր իմաստի վրա, օրինակ՝ *ձեռքը* (*ձեռքերը թուլանալ* (*վիատվել, լքվել, հուսահատվել, մի բան անելու ցանկությունը, կարողությունը կորցնել*) (Էջ 5), *աչքը* (*աչքերը սևանալ* (*կուրանալ, ահավոր բան տեսնել*) (Էջ 212), *ճարը* (*ճարըները կտրվել* (1. *միջոցները սպառվել, ստիպված լինել, էլ հնար չունենալ, հույսը կտրել*, 2. *ուժասպառ լինել, հոգնել*) (Էջ 8) և այլն:

Մյուս կողմից կան դարձվածքներ, որոնց գոյական բաղադրիչը կարող է միայն հոգնակի թվով դրվել. *աչքըների փառը վեր ընկնել* (1. *հասակն առնել, պառնալ, ծերանալ,*

2. այլևս միամիտ չլինել, սկսել հասկանալ, ըմբռնել շրջապատում աշխարհում կատարվող բաները 3. հանկարծակի ճշմարտություն իմանալ, հասկանալ, որ մինչ այդ սխալվել՝ մոլորվել է) (Էջ 206), ջրերն ընկնել (ի հաշիվ մեկի շահվել) (Էջ 43) և այլն: Այլ դարձվածքներում գոյական բաղադրիչը կարող է դրվել միայն եզակի թվով. օրինակ՝ բուրդը քամուն տալ (1. սաստիկ ծեծել, խոշտանգել, 2. սպառնալիքի արտահայտություն՝ վնասել, վնաս պատճառել, 3. բուրդը գզել, խիստ քննադատել, խեղճացնել) (Էջ 38), ձեռք վերցնել (1. ղեկավար դառնալ, իշխել, իրեն ենթարկել, հանձն առնել, ստանձնել, ստիպել ենթարկվելու, 2. զսպել զգացմունքների հորձանքը, հանդարտվել, հավասարակշռվել) (Էջ 213), սիրտ անել (քաջություն ունենալ, խիզախել, համարձակվել) (Էջ 205) և այլն: Գոյականի՝ եզակի կամ հոգնակի թվով դրվելը իմաստավորիչ դեր է կատարում միևնույն կազմն ունեցող դարձվածքների համար: Այսպես՝ սիրտը շահել նշանակում է «գրավել, մեկի սիրուն արժանանալ», իսկ սրտերը շահել՝ «ընդհանուր՝ հարգանքի կամ համակրանքի առարկա դառնալ, հանրությանն իրենով համակել» (Էջ 47), ջուրն ընկնել (ի դերև դուրս գալ), ջրերն ընկնել (ուրիշի առիթով օգտվել) (Էջ 43):

ԲԱՅԱԿԱՆ ԿԱԿԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բայական կապակցություններ ներկայացնող դարձվածքները ամենից սովորն են, քանի որ բայը, որպես լրացյալ, կապակցելիության տեսակետից ամենալայն հնարավորություններն ունի: Բայի լրացում կարող են լինել համարյա բոլոր խոսքի մասերը՝ գոյականը իր գրեթե բոլոր հոլովաձևերով ու նրանց իմաստային առումներով, ածականը, թվականը, դերանունը, բայի անդեմ ձևերը, մակբայը, կապը: Միայն գոյականն է, որ կարող է այս առումով բայի «մրցակիցը» լինել, բայց՝ հեռավոր:

Լրացյալ բայի՝ կապակցելիության այս ներուժի մեծ հնարավորություններից է բխում բայական կապակցությունների երկրորդ՝ շատ էական առանձնահատկությունը. դրանք ծավալման ավելի մեծ կարողություն ունեն, քան մյուս կառույցները:

Բայական կապակցությունների երրորդ առանձնահատկությունը վերաբերում է նրանց կիրառությանը: Խոսքային միջավայրում այս դարձվածքներն առավել ամբողջական են, քան մնացած բոլորը:

ԲԱՅ+ԳՈՅԱԿԱՆ, ԲԱՅ+ԴԵՐԱՆՈՒՆ

Կառուցվածքային այս տիպի դարձվածքները բայականների ճնշող մեծամասնությունն են կազմում: Բայի հետ գոյականը կապակցության մեջ է մտնում բոլոր հոլովաձևերով, ներառյալ սեռականը, որը կարող է գործածվել դերբայական ձևերի հետ մեծ մասամբ ենթակայական իմաստով:

Այս կառուցվածքային տիպին են պատկանում բայական ամենածավալուն դարձվածքները: Բայը մի կողմից, գոյականը՝ մյուս, կարող են բազմապիսի լրացումներ ստանալ: Դարձվածքի

կազմում կարող են միաժամանակ հանդես գալ գոյականի մի քանի հոլովածներ: Այսպես՝ *գլխովն անց կենալ* (գործ. հլ. , 1. *մի բանի մասին մտածել՝ խորհել, հանկարծակի միտք ծագել, 2. որևէ բանի մասին կասկածել, 3. մեկի կյանքում տեղի ունենալ, պատահել*) (Էջ 158), *արնովը լվանալ* (գործ. հլ. , *արյունով հատուցել, կյանքը ի սպաս դնելով՝ վրեժը լուծել, պատիվը վրիժառությանը վերականգնել*) (Էջ 159), *գլուխը ուտել* (հայց. հլ. 1. *սպանել, մեռցնել, ոչնչացնել, 2. մահվան պատճառ դառնալ*) (Էջ 159), *գլխում մտնել* (ներգ. հլ. , *մի բան լավ հասկանալ՝ ըմբռնել, հավատալ, համոզվել*) (Էջ 19), *խոսքիցը դուրս չգալ* (Բաց. հլ. , *մեկի խոսքը, կամքը, պահանջը, խնդրանքը կատարել, չմերժել, խոսքը չկոտրել, ասածը զանց չառնել*) (Էջ 22):

Գոյականից բացի իբրև բայի լրացումներ հանդես են գալիս և այլ ձևաբանական միավորներ: Օրինակ՝ *գլուխը քարեքար տալ* (1. *դես ու դեն ընկնել, շատ չարչարվել, 2. անելիքը չիմանալ, անելանելի վիճակի մեջ լինել, 3. հանդիմանական արտահայտություն՝ սխալ բան անել, սխալ գործել, հիմարություն անել*) (156), *գլխին փուլ գալ* (Էջ 170), *սրտին մեկ ճար անել* (Էջ 185):

Կան բազմաթիվ դարձվածքներ էլ, որոնցում գոյականական բաղադրիչներն են ունենում լրացումներ, ինչպես՝ *աչքըների փառը վեր ընկնել* (1. *հասակն առնել, պառավել, ծերանալ, 2. աչքերը բացվել, 3. զգաստանալ, ուշքի գալ*) (Էջ 206), *մահի դուռը գնալ* (*խիստ տանջվել, չարչարվել, մերձիմահ լինել*) (Էջ 208), *փորը վեր ածել* (*սպանել*) (Էջ 216):

Սրանք մանրակաղապարովներն են: Այժմ թվարկենք մեծակաղապարովներից մի քանիսը՝ ըստ գոյականի հոլովների.

ա) Ուղղական հոլով. *աչքը սևանալ* (1. *կուրանալ, 2. ահավոր բան տեսնել*) (Էջ 212), *ծեռը թուլանալ* (*վհատվել, լքվել, հուսահատվել, մի բան անելու ցանկությունը, կարողությունը կորցնել*) (Էջ 234), *հոգին տեղըհան լինել* (*հուզվել, տագնապել*) (Էջ 8):

բ) Տրական հոլով. *աստծուն մատաղ անել* (*զոհաբերել*) (Էջ 160), *գլխըներին կրակ վառել* (1. *խիստ վշտանալ, սիրտը մղկտալ, 2. մեծ դժբախտության, փորձանքի հանդիպել*) (Էջ 174), *սրտին մեկ ճար անել* (Էջ 185):

գ) Հայցական հոլով (ամենից մեծ թիվն են կազմում). *հայցականով գոյականները* բայի հետ հանդես են գալիս թե խնդրային, և թե պարագայական իմաստով:

Օրինակ՝ *գլուխը ուտել* (1. *սպանել, մեռցնել, ոչնչացնել*) (Էջ 159), *հոգին տալ* (*հոգին ավանդել, շունչը փչել, մեռնել*) (Էջ 160), *սիրտը շահել* (*իր կողմը գրավել, սիրաշահել, հոգուտ իրեն տրամադրել*) (Էջ 176):

Եթե համեմատելու լինենք ուղղական և հայցական գոյականով կազմված բայական կապակցությունները, մանավանդ նրանց կիրառությունը, կնկատենք, որ կապակցելիության տեսակետից ևս հիշյալ հոլովները նույնական չեն: Բանն այն է, որ հայցականը իր բոլոր

նշանակություններով կապակցելի է բայի ցանկացած ձևի հետ՝ թե՛ եղանակային, թե՛ դերբայական, միջոճ ենթակայական ուղղականը՝ բայի միայն եղանակային, այն էլ կոնկրետ դիմավոր ձևերի հետ: Այն գերազանցապես կարելի է անորոշ դերբայի հետ:

դ) Բացառական հոլով. *խելքը գլխիցը գնալ* (1. *խելքից, բանականությունից, գրկվել, խելագարվել, ցնորվել, հիմարանալ, անխելքանալ*) (Էջ 194), *քունը աչքիցը փախնել* (որևէ պատճառով *քունը խանգարվել, խափանվել*) (Էջ 196), *ոտից-ձեռից ընկնել* (*շարժվելու, աշխատելու, որևէ բան անելու անկարող, անզոր, տկար լինել*) (Էջ 100):

ե) Գործիական հոլով. *արնովը լվանալ* (*արյունով հատուցել, կյանքը ի սպաս դնելով՝ վրեժը լուծել, պատիվը վրիժառությանը վերականգնել*) (Էջ 159), *մեկ ականջովը մտնել, մյուսով դուրս գալ* (1. *լսածը անմիջապես մոռանալ, մտքում ոչինչ չմնալ, չհիշել, 2. խոսքը, խրատը բանի տեղ չդնել, հաշվի չառնել*) (Էջ 141):

զ) Ներգոյական հոլով. *գլխումը մտնել* (1. *մի բան լավ հասկանալ՝ ըմբռնել, 2. հավատալ, համոզվել*) (Էջ 19), *սրտումը դարդ մնալ* (*շարունակել տանջվել*) (Էջ 763):

«Բայ + գոյական» կապակցություններից կառուցվածքային տեսակետից չեն տարբերվում «բայ + դերանուն» կապակցությունները, քանի որ դերանուններն իրենց հոլովաձևերի իմաստային առումով բայի հետ նույն կարգի հարաբերությունների մեջ են մտնում, ինչ որ գոյականները, միայն այն տարբերությամբ, որ նրանք կապակցելիության, մանավանդ կառույցի ծավալման ավելի սահմանափակ հնարավորություններ ունեն, քան գոյականները: Իսկ դրա պատճառները դերանվան խոսքիմասային առանձնահատկությունների, մասնավորապես նրա՝ կոնկրետ հասկացություններչարտահայտելու մեջ են:

Օր.՝ *իրանից գնալ* (*ուշաթափվել, նվաղել, մարել, ուշքը գնալ*) (Էջ 189), *ինքն իրան սիրտ դնել* (*ինքն իրեն գոտեպնդել*) (Էջ 189), *իր ձին քշել* (*իր ցանկացածն ու գիտեցածն անել, համառել՝ ուշադրություն չդարձնելով ուրիշի ասածներին, ուրիշին չանսալ, չլսել, համառել, կամակորել*) (Էջ 16) և այլն:

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ՝ ԸՍՏ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ

Չասկացություն արտահայտող դարձվածքները սովորաբար երկու-երեք բաղադրիչ են ունենում: Օրինակ՝ *սիրտը շահել* (*իր կողմը գրավել, սիրաշահել, հոգուտ իրեն տրամադրել, տրամադրությունը լավացնել, վերականգնել*) (Էջ 176), *տունը քանդվել* (1. *մեծ վնաս հասցվել, 2. զարմանքի, հիացմունքի բացականչություն, 3. անեծք*) (Էջ 188), *հողը մտնել* (*մեռնել*) (Էջ 189), *հոգին մաշել* (*վշտերով, հոգսերով տառապել*) (Էջ 193), *միտը ծռել* (*մոլորեցնել, ծուռ ճանապարհով տանել, գայթակղել, ուղիղ ճանապարհից հանել*) (Էջ

193), *խաթըր անել (մեկի պատիվը պահել)* (Էջ 19), *հոգին տալ (անսահմանորեն նվիրված լինել մի բանի, սիրով, նվիրվածությամբ մի բան անել)* (Էջ 109) և այլն:

Հայերենում երկու-երեք բաղադրիչով դարձվածքները ճնշող մեծամասնություն են կազմում: Չորս և ավելի բաղադրիչով դարձվածքները սովորաբար նախադասություն-դարձվածք են և հիմնականում առած-ասացվածքների ձևափոխության արդյունք են. օրինակ՝ *հոգին ատամների տակն առնել (ինքն իրեն ծանր վտանգի ենթարկել)* (158), *աչքերի փառը վեր ընկնել (1. հասակն առնել, պառավել, ծերանալ, 2. աչքերը բացվել, 3. զգաստանալ, ուշքի գալ)* (Էջ 206), *ճակատը գյուլին դուրբան անել (սպանել)* (Էջ 121):

Սովորաբար դարձվածքի կազմում առավելագույնը լինում է վեց բաղադրիչ, բայց այդպիսի դարձվածքները սակավաթիվ են, իսկ յոթ և ավելի բաղադրիչով դարձվածքները հատուկ են:

Օրնակ՝ «Բիր գյորանդա՝ յոլդաշ, իքի գյորանդա՝ դարդաշ» (*մեկ տեսնելիս ընկեր, երկու տեսնելիս՝ ախպեր*), (Էջ 177), «Էլա մուսուրման օլուբասզ, քի աթանըզ խաչի թանըմիսզ» (*Էնպես թուրք եք դառել, որ ձեր հոր խաչն էլ չեք ճանաչում*), «Ում սրտումը խեթ կա, աստված բարին կատարի» (Էջ 43):

Դարձվածքների ծավալի սահմանափակ լինելը բխում է նրանց էությունից: Դրանք կարճ, դիպուկ, պատկերավոր խոսք են, որոնք փոքր ծավալով մեծ իմաստություն են արտահայտում: Ուստի ծավալի սեղմությունը դարձվածքի համար առավելություն է:

ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՔԻ ՄԵՋ

Հասկացություն արտահայտող դարձվածքները նախադասության մեջ հանդես են գալիս որևէ անդամի պաշտոնով: Դարձվածքի՝ նախադասության այս կամ այն անդամ դառնալը պայմանավորված է այն բանով, թե ինչ խոսքի մասի արժեքով է այն հանդես գալիս:

Գոյականական դարձվածքները կարող են կատարել բոլոր այն պաշտոնները, ինչ որ գոյականները.

«...թե որ աստված տա, համն առնիս, էն ժամանակը էդ սև երեսդ կսպիտակի, էդ գիլի աչքերդ (վախ, երկյուղ, սարսափ) գառն կդառնա, էդ հոտած բերանդ կդառնա աստուծո տաճար (եկեղեցի, աղոթատեղի)» (Էջ 135): Ընդգծված գոյականական դարձվածքներից առաջինը կատարում է ենթակայի պաշտոն, երկրորդը՝ ուղիղ խնդրի: Վերացական բայերով կազմվում է բաղադրյալ ստորոգյալ, ուստի երկրորդ օրինակում ստորոգելիի հետ գործ ունենք:

2. «Մեկ ճանճ էլա նհախ տեղը չես սպանել, մեկ սառը խոսք քո բերնիցը չի դուս եկել, ա՜յ աստուծո զառն (հեզաբարո, հեզահամբույր, խաղաղ, անմեղ, պարկեշտ, անվնաս մարդ) ախպեր, ախր ընչի՞ պետք է աստված քեզ էլ, մեզ էլ էստեղը հասցներ» (էջ 170):

Ընդգծված գոյականական դարձվածքը որոշիչ է:

3. «Արյան ծովն (արյունահեղություն, մասսայական սպանություն, մասսայական զոհեր ու կոտորածներ) էկել, չորս կողմներս բռնել ա, որ կողմնել ձեռն ենք ածում, կրակ է ընկնում ձեռներս» (էջ 170):

Ընդգծված գոյականական դարձվածքը ենթակա է:

Բայական դարձվածքները կարող են կատարել ստորոգյալի պաշտոն, օրինակ՝ «Ինչքան թույն ունեին, մեր ազգի գլխին էին թափում» (1. *ծանրաբեռնել*, 2. *հավաքել*, 3. *ժողովել*, *կուտակել*, 3. *վերագրել*) (էջ 157), «Հայաստան հրեշտակի պես առաջին կանգնել, ինձ թև էր տալիս» (*ոգևորել*, *խրախուսել*, *խանդավառել*, *հույս տալ*, *սիրտ տալ*, *համարձակություն տալ*) (էջ 10): Բայական դարձվածքները կարող են կատարել նաև այլ պաշտոններ, ինչպես՝ պարագայի,

օրինակ՝ «Բայց նա էս բոլոր արինը աչքի տակն առած՝ էկավ ու թղթերը Մարաթովին տվեց» (մի բան անելու համար կյանքը մահվան վտանգի ենթարկել, մահը աչքն առնել, իր կյանքը վտանգի տակ դնել) (էջ 158), ... ձախու ձեռը թրին դուրքան տալով, թշնամու դեմը բռնելով, աջու ձեռը որ Հասան խանի գլխովը չի՛ պտտեց քաքուլի կամ միրքի մի տեղ չանեն ընկավ ձեռքը» (թուրը բռնելով) (էջ 136), «... արինն աչքները կռխած, թրերը սրած՝ գալիս էին, որ իրան տանին» (բարկանալ) (էջ 157):

Ընդգծված դարձվածքները ձևի պարագաներ են:

Աչքի փուշ դարձվածքը սովորաբար գործածվում է *լինել*, *դառնալ* բայերի հետ, *ձեռք վերցնել* (էջ 109) դարձվածքը գործածվում է բացառական հոլովով լրացման հետ, *ձեռք աշել*-ը՝ բացառական լրացման հետ:

ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԽՈՍՔ ԵՎ ԴԱՐՁՎԱԾՔ

Պատկերավոր մտածողությունը ի բնե հատուկ է եղել մարդուն, պատկերավորումը՝ նրա մտածողության ամենասովորական ու բնական հնարներից: Պատկերավորման բազմազան միջոցներ ընկած են հայերեն հարյուրավոր դարձվածքների հիմքում: Եթե դարձվածքը ստացվում է նախադասության մեջ բառերի վերախմաստավորումից, ապա պատկերավորումը հենց բառերի վերախմաստավորումն է: Վերցնենք *մտքի ծով* (էջ 189)

դարձվածքը: Այս կապակցության հիմքում միաժամանակ երկու միջոցներ են ընկած՝ փոխաբերությունը (ծով-մտքի՝ ծով) և չափազանցությունը (մտքի ...ծով):

Պատկերավորման միջոցների այսպիսի «հարթություն» հաճախակի չէ, որ կարելի է գտնել մեր դարձվածքների մեջ:

1. Փոխաբերություն: Մեր դարձվածքները ամենից շատ փոխաբերություն են ունենում իրենց հիմքում:

Երկար ժամանակ գիտնականները դարձվածքը սահմանել են իբրև փոխաբերաբար առնված կայուն կապակցություն: Բավական մեծ թիվ են կազմում այն դարձվածքները, որոնք ամբողջությամբ փոխաբերաբար առնված կապակցություններ են. *մահի դուռը գնալ (խիստ տանջվել, չարչարվել, մերձիմահ լինել)* (Էջ 208), *մատը մի բանի վրա դնել (տիրանալ, մի բանի վրա իր իրավունքը հայտնել, իրենը համարել, հավանել, ձեռք բերելու ցանկություն ունենալ)* (Էջ 210), *քաղաքը անեծքով քանդել* (Էջ 204), *գլխին չար հրեշտակ պտտել* (Էջ 194) և այլն:

Այս դեպքերում ոչ թե կապակցությունն ամբողջովին, այլ նրա առանձին անդամը կամ անդամներն են փոխաբերաբար առնված լինում: Օրինակ՝ *սիրտը բաց անել (1. անկեղծ լինել, իր նվիրական գաղտնիքները, զգացմունքները, ապրումները հաղորդել մեկին, 2. տրամադրությունը բարձրացնել)* (Էջ 180), *մահվան դուռը գնալ (խիստ տանջվել, չարչարվել, մերձիմահ լինել)* (Էջ 196), *աչքը սևանալ (կուրանալ, ահավոր բան տեսնել)* (Էջ 212) և նման շատ դարձվածքների մեջ բայ բաղադրիչներն են փոխաբերաբար առնված, իսկ *աչքը ջուր կտրել (ակնդետ նայել, կարոտով՝ անհամբեր սպասել, լալով, արտասվելով շատ երկար սպասել, երկար ու ապարդյուն սպասել)* (Էջ 15), *փորին արքայություն լինել* (Էջ 15), *աստղը թեքվել (ձախորդության հանդիպել, դժբախտանալ, աստղը ընկնել)* (Էջ 170) և այլ դարձվածքների մեջ՝ ընդգծված գոյականները:

2. Համեմատություն: Հաճախ հանդիպում ենք այնպիսի համեմատությունների, որոնք դարձվածքի արժեք ունեն: Դրանք համեմատություն-դարձվածքներն են, որոնք իմաստային և ամեն տեսակետից կուռ են, երբ ամբողջության մեջ են վերաիմաստավորված: Օրինակ՝ *հավի պես թպրտալ* (Էջ 52), *խելքը թռցրածի պես (խելագարի, խենթի, ցնորվածի պես)* (Էջ 65), *ջրի պես (1. սահուն, անսայթաք, բերանացի, անգիր, 2. շատ, չափազանց) իմանալ* (Էջ 32), *աչքի լսի պես մեծացնել (որպես ամենաթանկագին, ամենանվիրական բան մեծ խնամքով, հոգատարությամբ պահել, պահպանել, սիրել, փայփայել)* (Էջ 49) և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություն է, որում բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնած:
2. Մեր լեզվի դարձվածքների գերակշռող մասի արտահայտած իմաստներն այնքան ակնառու կերպով են կապվում իրենց բաղադրիչների հետ, որ մտավոր մեծ ճիգ չի պահանջվում այդ աղերսը բացատրելու համար: Բայց կան և այնպիսիք, որոնց ստուգաբանական վերծանումը կապված է որոշակի դժվարությունների հետ:
3. Դարձվածքը և բառն ունեն ընդհանուր հատկանիշներ, այն է՝ բառային իմաստ և քերականական կարգեր: Բառը և դարձվածքը նման են նրանով, որ երկուսն էլ արտահայտում են:
4. Դարձվածային կապակցության առաջին պայմանը նրա ձևաբանական համապատասխան ձևավորումն է: Դարձվածքների մեջ բաղադրիչ բառերի կապակցումը տեղի է ունենում ձևաբանական նույն օրենքներով, ինչ որ ազատ կապակցություններում:
5. Հասկացություն արտահայտող դարձվածքները նախադասության մեջ հանդես են գալիս որևէ անդամի պաշտոնով: Դարձվածքի՝ նախադասության այս կամ այն անդամ դառնալը պայմանավորված է այն բանով, թե ինչ խոսքի մասի արժեքով է այն հանդես գալիս:
6. Դարձվածաբանությունը սերտ կապ ունի նաև ոճաբանության հետ, քանի որ դարձվածքները պատկանում են լեզվի պատկերավորման միջոցների թվին:
7. Այսպիսով, նշանակությամբ, ծագմամբ և խոսքի մեջ ունեցած յուրահատուկ դերով պայմանավորված՝ դարձվածքները բառագիտության, շարահյուսության և ոճաբանության հատման կետում են:

-
- [1] Ա.Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, 1959, էջ 11:
- [2] Գ.Բ. Ջահուկյան, Է.Բ. Աղայան, Վ.Պ. Առաքելյան, Վ.Ա. Քոսյան, Հայոց լեզու, I մաս, Երևան, 1980, էջ 473:
- [3] Պ.Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, էջ 5 :
- [4] Ա.Ա. Մուրվալյան, նշվ. աշխ., էջ 15:
- [5] Պ.Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 85:
- [6] Գ.Բ. Ջահուկյան, Է.Բ. Աղայան, Վ.Դ. Առաքելյան, Վ.Ա. Քոսյան, Հայոց լեզու, I մաս , Ա պրակ, Երևան, 1980, էջ 480:
- [7] Գ.Բ. Ջահուկյան, Է.Բ. Աղայան, Վ.Դ. Առաքելյան, Վ.Ա. Քոսյան, Հայոց լեզու, Ա.Պրակ, Երևան, 1980, էջ 500:
- [8] Խ.Աբովյան, Ընտիր երկեր, հատոր II, Երևան, 1940, էջ 357:
- [9] Նույն տեղում, էջ 359:
- [10] Ա.Ա. Մուրվալյան, նշվ. աշխ., էջ 49: